

Չարք Ինչպե՞ս է հաշվարկվում միադրույք սակագինը:

Պատասխան Միադրույք սակագնի կիրառման դեպքում սակագինը հաշվարկվում է որպես ընկերության անհրաժեշտ հասույթի (ԱՅ) և գնորդին տարվա ընթացքում առաքվող էլեկտրական էներգիայի ($W_{առ}$) հարաբերություն՝

$$\hat{e} = \frac{2D}{W_{2e}}$$

Տարվա ընթացքում առաքվող էլեկտրական էներգիայի հաշվարկային մեծությունը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{առ} = W_{արտ} - W_{սկ}$$

որտեղ՝ $W_{արտ}$ - էլեկտրական էներգիայի տարեկան արտադրանքի հաշվարկային մեծությունն է (կՎտ/ժ),

$W_{սկ}$ - կայանի տարրերում տեղի ունեցող կորուստների և սեփական կարիքների վրա ծախսվող էլեկտրական էներգիայի քանակն է (կՎտ/ժ):

Արցախի Չանրապետության տարածքում գործող միակ խոշոր հիդրոէլեկտրակայանը «ԱրցախՅԷԿ» ԲԲԸ «Սարսանգ» ՅԷԿ-ն է՝ դրվածքային հզորությունը 50 Մեգավատտ, էլեկտրական էներգիայի միջին տարեկան արտադրանքը՝ 100 մլն. կՎտ/ժ, որից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը Չանձնաժողովի կողմից սահմանվել է 2008 թվականի մարտի 20-ի N 14Ա որոշմամբ և ճշգրտվել է 5 անգամ, հաշվի առնելով սղաճը և փոխարժեքի տատանումները:

«ԱրցախՅԷԿ» ԲԲԸ Սարսանգ խոշոր և 5 փոքր ՅԷԿ-երից (Թրղի 1, Թրղի 2, Թրղի 3) առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագինը Չանձնաժողովի 2019 թվականի հուլիսի 19-ի N 45Ա որոշմամբ սահմանվել է 25,4 դրամ/կիլովատտ/ժամ ներառյալ ԱԱՀ, իսկ Թրղի 4 ՓՅԷԿ-ի սակագինը՝ 2019թ 46-Ա (19 հուլիսի 19թ.) որոշմամբ 28, 243դրամ, ներառյալ ԱԱՀ: